

Պարոն ի՞նչ հալի կաս. եւ նա քնաթաթախ
 ընդ քունն մրմռայ, գիտէ թէ ընդ ընկերացն
 է. եւ նա տեսեալ զնա թմրած՝ առնու զգօ-
 տին գլխուն եւ փախչի, կամ ձգէ զայրն ի
 ձիուն եւ ինքն հեծնու եւ փախչի: Իսկ այլքն 180
 զկնի յետ մնալով զան հետ քարվանին. եւ թէ
 ոք վասն կարեաց կամ այլ իրաց սակաւ մի
 յետ մնայ, առնուն զէջն եւ զապրանքն եւ փախ-
 չին. զի են որպէս մժղուկք եւ պիծակ, որ յա-
 ւազէն ի դուրս զան. ամէն փոս եւ թուփ քա- 185
 ռայատակս բնակութիւն է նոցա. զի անձրեւ
 չկայ Մսրայ երկիրն. եօթն տարին անգամ մի
 չի գալ: Իսկ այլք երթան ուղտոց բեռինս.
 մինն կաշնու զտէնկն. միւսն կտրէ զպարանն
 եւ կախ մնայ. այլք առնուն զտէնկն եւ փախ- 190
 չին. եւ սակաւ մի զնացեալ թողու գտանկն եւ
 նա հալածի: Իսկ վերեւի մարդ եւ մին զանկն
 յերկիր անկանի, անդ է լսել ձայն աղաղակի
 եւ զլաց, ճիչ եւ զբօթ. ոմն լայ՝ հակս չկայ,
 ոմն թէ էչս, այլն արըզս. կոծին ողբան եւ 195
 ոչինչ օկտին:

ԳԵՐԵԶՄԱՆ ՍԱՄՈՒԷԼ ՄԱՐԳԱՐԷԻ

Եւ չուեալ անտի մին օրն հասաք ի
 բարձր լեառ մի եւ քարուտ, զի Ռամլու մինչ
 յերուսաղէմ ամէն քար է եւ ապառաժ: Եւ
 այն լեռան ներքեւն զեղ մի կայր արպի. որ եւ 200
 անդ առին մին-մին ոռուպ: Եւ գլուխ լեռանն
 զերեզման է Սամուէլի մարգարէի. եւ ասին
 թէ անդ ժողովին Հրեայք ամենայն շարաթի,